

Г. В.
ОПОВЪ.
ИВНХЪ
еп. се-
879 г.
бравий
Б. Д. В.
при-
авиты.

4 рѣ-
СЛАДЪ
Моск
ВЫХЪ
ГОРОД
Болѣ
Бате-
Берт-

Зѣнѣ
Болѣ
Болѣ

Болѣ
Болѣ
Болѣ

Болѣ
Болѣ
Болѣ

Болѣ
Болѣ
Болѣ

Болѣ

Болѣ

Болѣ

Болѣ

Болѣ
Болѣ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Սուսանին համարները 5 կոպիկով:

Փոխարկում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաբարդաբարդի դիմում են ուղղակի
Тифлисе, Редакция „Маск“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունուած է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանիւր բառին 2 կոպիկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

—Ն ե ի թ ի ն ա ե ու թ ի լ ի ն: Նամակ Ալեքսանդր-
բաղդից: Նամակ Երևանից: Նամակ Գանձակից:
Նամակ Նամակուց: Ներքին ուրեր: Արտաքին
տեղեւորութիւն: «Journ. de st. Petersburg» լրագրի
յօդուածը: «Форт» լրագրի թղթակցութիւնը: «Մը-
շակի» հետազոտութիւնը: Ցայտարարութիւններ: Բա-
նասիրական: Նամակ Փիւրքիայից:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Սեպտեմբերի 20

Վերջին քաղաքական անցքերի ազդեցութեան
շնորհիւ, Փիւրքիայի այդ ազդը կրօնական համայն-
քից փոխվեցաւ քաղաքականապէս ազդու-
թեան, և այդ փոփոխութիւնից յետոյ նրան առօ-
րեայ կեանքի կենսական նշիւներն և պահանջ-
ները անբնական բազմապատկան և բազմապատկան
նախկին ստացան, որ ամեն մտածողը, ինքն
իրան հայոց առաջարկեց՝ թէ ո՞վ պէտք է կատա-
րէ այդ գործերը, ո՞վ պէտք է աշխատէ ընդհա-
նուրի համար, և ո՞վ պէտք է իրականացնէ այն յո-
սերը որոնցով ապրում է այժմ հայ ազգը: Նա ամեն
անգամ, մինչ տեսնում ենք հասարակական գործու-
նէութեան ապագայի մէջ երեք առանձին գոր-
ծիչներ՝ հայ լրագրութիւնը, հայ երիտասարդու-
թիւնը և հայ չղջողականութիւնը:

Խօսելով հայ ազգի ամենամեծագոյն մի խնդ-
րի վերաբերութեամբ, այն է ազգութեան դադա-
փարի ընդհանրացնելու, և կրօնական դադափա-

րից ազդութեան դադափարի փոխարինելու վե-
րաբերութեամբ, որովհետեւ այդ հարցը հայի հա-
մար կրօնական խնդիրներից առաջինն է և ամե-
նակարեւորն է:

Այն մտաւորապէս չորս տարի է, որ լրագրու-
թիւնը Վոլկասում, կամ աւելի լաւ է ասել
«Մշակ» լրագրի հայերի մէջ աշխատում է ժամա-
նակակից դիտութեան իրական և անհրաժեշտ խնդ-
րները յարուցանել, և ընդհանրացնել ամբողջ
մէջ արտայայտելով միանգամայն այն միտքը, թէ
Վոլկասի հայը բնականապէս պարտաւոր է բա-
րոյապէս օգնել Փիւրքիայի համարին եղբայրներին,
առանց կրօնի և համոզմունքի դանդաղանքի ին-
տելու:

Լրագրութիւնը մեր մէջ կատարեալ նախադա-
տութիւն է. մեր նրան կարգում ենք որպէս
մի զուարճութիւն, մի ինքնասիրական ցոյց և
լրագրութեան յայտնած մտքերը մեր մէջ գննէ մի
քանի բոլոր հեղափոխութիւն չեն գտնում, մինչ
խաղն մտածում ենք:

«Մշակը» ինքնագոյնութիւն է գործում, նա ա-
զդադրում է անդադար կրկնում է կրօնի և ազ-
գութեան խնդիր, նա կամենում է որ հայը հայ
լինի, նա յարգում է կրօնական կուսակցութիւն-
ների համոզումը հասարակապէս, նա ցանկանում
է որ հայ ազգի առանձնացած կրօնական կու-
սակցութիւնները կազմէին ազգային միութիւն:
Գտնվում են մեզանում շատերը, որ արհամարում
են այդ դադափարները, առելով, թէ այդ լրագրի-
կրօնականութիւնը է կամենում: Լրագիրը ասում
է, թէ մեր անձնական կրքերը, դաւանանք և կեղծ ազ-
գասիրութիւնները, եսականութեան չար նախանշը
պէտք է վերցվեն մեզանից, մեր միտքը, մեր մտած-
մունքը այժմ պէտք է լինի ազգութեան ներկան,
մեր ոյժերը պէտք է նուիրենք ազգային միութեա-

նը, եղբայրական համակրութեանը: Բայց այդ
մտքերը ամբողջ մեծամասնութեանը մատչելի,
հասկանալի չեն լինի, որովհետեւ լրագրի մտքերին
չեն համակրում հայ երիտասարդութիւնը և չղջող-
ական դասը, որոնք ապրում են նոյն իսկ ժողո-
վրդի շրջանում, և այդ պատճառով, լրագրի յայտ-
նած մտքերը երկար ժամանակ կը մնան անգոր-
ծադրելի: Լրագրութիւնը երբեմնապէս պաշտ-
պանելով հասարակաց շահերը, կողմնակի կամ
ուղղակի յանդիմանում է մի վատ առաջնորդի, մի
անգործ և անպարտաճանաչ ուսուցչի, յայտնա-
կող երեցիկների, կամ մի որ և է անազնիւ հա-
կատական երևոյթ արտադրող անձնատուրութեան:
Բաւական է, որ մի լրագիր յայտնէր մի հոգե-
րական անազնիւ վարմունքը, գաւառական որ և
է քաղաքում պատահած մի անցք, խաղն հոգե-
րական դասը կը յայտնէ իր «արդարացի» բողոքը
լրագրութեան դէմ, պաշտպանելով իր պատկա-
ռելի պաշտօնի պատիւը հասարակութեան առաջ,
թէ և ժողովրդական արդարացի դժգոհութիւնները,
ցարժ պէտք է ասել, որ անպակաս են հոգե-
րական դասի դէմ:

Լրագրութիւնը, բացի ժողովրդին օգտաւէտ
մտքեր յայտնելուց, ունի և մի մեծ նշանակու-
թիւն, այն է հասարակութեան մէջ ընթերցանու-
թիւն տարածել: Բայց լրագրութիւնը մեր մէջ
զբաղդարար ծառայում է առանձնապէս մի-
մանց հակառակ կուսակցութիւններին, որոնք
անխելանալի կերպով յարձակվում են միմեանց
յայտնած մտքերի դէմ:

Լրագրութիւնը մեզանում այն ժամանակ իրա-
կան օգտու կարող կը լինի տալ երբ նրա յայտ-
նած մտքերը, դադափարները, հայաքնները կը
լինեն լուրջ ազգային թերթի խորհրդածութիւններ
հետո այն նեղ կրօնական հայացքից, որ տիրում

էր սորանից առաջ մի յայտնի լրագրութեան շըր-
ջանում: Գաւառական թղթակցութիւնները պէտք
է լինեն նրա ձայնի արձագանքը, նրա ճշմարիտ
ներկայացուցիչ ժողովրդի առաջ, լրագրութեան
սրբարժան դադափարի անմիջապէս իրականաց-
նողը, ընդհանրացնող ամբողջ մէջ:

Լրագրութիւնը միայն անդոր է գործելու, ընդ-
հանուրի վերաբերութեամբ լրագրութեանը պէտք
է օգնեն բոլոր դաւանութիւններին պատկանող
անհատները անխտրաբար, պաշտպանելով մտքի և
նպատակի համարաշխութիւն և ձգտումները միա-
կերպ առաջնորդութիւնը: Այն օրից, երբ
«Մշակը» հաւատարմապէս պաշտպանեց և համակ-
րեց ամբողջ Վոլկասի հայերին, առանց կրօնի խնդ-
րութեան, նա դարձաւ ազգային լրագիր, նրա-
նում թղթակցում ենք և մինչ կաթոլիկ հայերու, և
լուսաւորչականները և աւետարանականները: Վոլ-
կասի հայերի այդ առաջին միութեան և ազգային
ինքնաճանաչութեան քայլ էր, որ կատարվեցաւ
«Մշակի» անցող եղբայրական ցանկութեամբ:
«Մշակը» իրաւամբ կարող է աղղալ իր լրա-
գիր կոչվել, երբ նա Վոլկասում առաջին պաշտ-
պան հանդիսացաւ ազգային դադափարի, և նրա
ցանկութիւնը կը պսակէ այն ձմարի իրողու-
թիւնը, որ հաւատարմապէս բոլոր դաւանութեան հա-
կերը, ժամանակով կը ձանաչեն նորա պաշտպա-
նութիւնը Սզգութեան դադափարի:

Պետրոս Բէպուրեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Սեպտեմբերի 29

«Մշակի» մէջ շատ անգամ պարզ կերպով բա-
ցատրված էր թէ ինչ պիտի լինի դ ա ա ա ա ա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՍԵՒՑ

Կ. Պոլսի, 27 սեպտեմբ. 80

Արդունի պալատը մեծ մտաւորութեան մէջ
էր: Սուլթանի կանանցիկ սե պահպանապետը
մեռաւ, և յաջորդը պէտք էր ընտրել, և ընտրեցին:
Եթէ տաճկաց քաղաքակրթութեան մէջ որչափ
յառաջադիմած լինելին կուզէք իմանալ, այս
առիթմ լաւ է: Փիւրք թերթերն կը հրատարա-
կեն թէ ինչ մեծ դեր կը կատարէ սե պահպա-
նապետը. նորա բարձրագոյն տիտղոսը կուսան,
տէրութեան աստիճանադրներուն զինուորն է, և
Նիսի-Իւ-Իւրամէն և մեծ վեզիրէն վերջը ինքն
կուգայ: Նորա կամքն շատ անգամ աւելի զօրու-
թիւն ունի քան թէ բոլոր նախարարութեան կամ-
քը, և ստէպ Բ. Իրան որոշմանց հակառակ որո-
շում դրուած է, ազդեցութեամբ սե ներքինին: Շատ
ներքինիներ Սադրազամ ընտրուած են: Այս տեղե-
կութիւններն թերթը թերթերն կը հաղորդեն: Վար-
ձեմը սուլթանէն վերջը Տաճկաստանի իշխանը կա-
նանցիկ պահպանն է: Այս մտածելը թէ ինչ աստի-
ճան յառաջադիմութեան ընդունակ է ժողովուրդ
մը, որ հասարակաց լուսաւորութեան պաշտոննայն
սե ներքինի մը շատ ստորին վիճակի մէջ կը գը-
տնուի, յորում ամեն բարձր պաշտոնեայը նորա
առջև կը խոնարհին, և դեռ կարծեմ որ այսպիսի
երկրի մը փրկուելու կարող է: Առաջին նախարար
Սալիբ բաշա այդ փրկութեան համար կուզէ ամեն
միջոց ի գործ դնել, բայց յաջողութիւն գտնեն
շատ տարակուսական է: Գիւսանդիտական միջոց-
ներու հետ միասին իւր ուղղութիւնը մամուլ
վրա կը դրած: Ժամանակ մը Բ. Գուսը շատ
կը կաշաւէր եւրոպական մամուլը, այնպէս
որ Փուսը բաշա կըսէ եղբի թէ մեծ փոխառու-
թիւն մ'ալ մամուլ համար պէտք է ընել: Ատեն
մ'է այդչափ ուղարկութիւն չէին ընծայեր, այժմ
Սալիբ բաշա կուզէ նորին առջինին պէս ընել:
Արէյս անուն Փրանսիացի զննապետ մը, որ սուլ-
թանին ծառայութեան մէջն էր, այս օրերս Ներսիս

Խրկեցին մեծամեծ գումարներ դնելով նորա տրա-
մագրութեան տակ Ներսիսի թերթերն բարեկամ
ընելու համար: Պ. Արէյս մասնաւորապէս երկու
միջոցներու պիտի դիմէ, մին է թերթերուն պաշտ-
պանողական յորտաճմանը դրել տալ ի նպաստ
Տաճկաստանի, միւսն՝ որ թերթերն որ բաւական
յառաջացած են ընդդէմ Փիւրքիայ և իրենց նե-
րքին չէ պաշտպանութիւն ընել, համոզել դանդը
որ եթէ պաշտպանութիւն չեն, գէթ յարձակում
ալ չեն, և այս ալ բաւական բան է: Այս կէտն
մեզ համար կարեւոր է. Ներսիսի մամուլն ընդ-
հանրապէս մինչև հիմա մեզ համար համակրական
լեզուով կը խօսէր, և կը սպասեմ որ այսուհետեւ
հասարակաց կարծիքն աւելի լուսաւորեն մի խնդ-
րոյն համար, սակայն մեզ նոցա շատ պղտորու-
կան փոխարինութիւն կընենք. չունենք նաև մաս-
նաւոր օրգան մը մեզ համար: Լաւ կըլլայ եթէ
քիչ մը ասոնց ուղղութիւն ընենք: -Կ. Պոլսի
մէջ ալ կառավարութիւնը աղէկ մը տանձնեց
քրիստոնեայ թերթերն: Իսկ տեսնելով որ թերթ
թերթերուն խիստ լեզուն բաւական վրդովում կը
պատճառէ, նոցա խմբագիրներուն պատուիրեցին
որ այսուհետեւ քիչ մը մերձ գրեն, որով քանի օր
է տաճիկ լրագրիներն այնքան վայրենաբար չեն
գրեր: Ամենէն շատ Օսմանլի Փրանք-թերթը
թերթը կը ցաւի, զի հայկական խնդիրն իրեն դը-
րամագրուի ըրած էր, այն թերթը, յորում մեզ
դէմ կը գրէր, մի հատ չէր մնար. այսօր խմբագրա-
տան մէջ անհնար է հայոց դէմ յօդուած պարու-
նակող թերթին մէջ գտնալ, և խմբագրապետն իսկ
զարմանք կը յայտնէ: Օսմանլի ողբեր կը կար-
գայ հայկական խնդրոյ առիթով իր թէ բաւական
չըլլային կըսէ, առկա մնացած այնքան խնդիր-
ներն Արեւելից վերածնութիւնը արգելելու համար,
և ահա կը սպասեմ մեզ հայկական խնդիր մը
ևս, զոր արհեստական կերպով կը զարթոյցանեն:
Բայց չեն գիտեր թէ այսու փոխանակ հայոց վի-
ճակը բարեփոխու, աւելի կը վատթարացնեն դայն,
զի նոր խնդիր մը ուրիշ բանի չը ծառայեր, բայց
եթէ աւելի երկարելու այն ճգնաժամը որ կը
ցանկանան, այնքան աղբիւր բարեփոխումն և նի-
թական բարեկեցութեան:

«Ատեն մը երբ հայերն աւելի նուազ ճանչցուած
էին յերօպա և ոչ այնքան հարեալ այն դադափարաց,
որը այժմ ի պատուի են, և զոր արդարապէս կըր-
նաք կոչել՝ հարաբեր դադափար, շատ աւելի լա-
ւագոյն էր հայոց վիճակը: Կայսրութեան բոլոր
գանձերն հասարակաց թէ անհատական իրենց ա-
փերուն մէջն էր. իրենցմէ կախում ունէ՝ այսօր
երկրին ամենէն մեծ դրամագէտներն լինէր: Բայց
յորմէ հետէ ցնորական դադափարներ տիրապետե-
ցին այս հասարակութեան երիտասարդաց մէջ
մասին դադափարաց վրա, կը տեսնենք անձեր,
որը նախապատու կը համարեն թղթով լքանել
հարտարարութեան, վաճառականութեան և
գանձուց օգտակար ասպարէզներն և նետուիլ քա-
ղաքական բաղադրանքները մէջ, որ այնքան
փտանգաւոր են թէ երկրին ապագային և թէ նոցա
համար, և որ առ այժմ դիրենք աւելի դժբաղդ
կրնեն:»

Օսմանլի ի խօսքերէն կը տեսնուի թէ բարձր
շրջանակներու մէջ իսկ երկրի մը կը դգան հայ-
կական խնդրոյ ապագային յարուցանելը փոթո-
րիկներու վրա, և անտեսադիտական հրապոյններով
կուզեն զմիջ պատրել: Եթէ Օսմանլի ի խմբա-
գիրներն ի մտայն ուսումնասիրած լինէին հայերն,
պիտի տեսնէին թէ ճիշտ անտեսադիտական հար-
ցերն են, որ պատճառ եղան հայկական խնդիրն
զորացնելու: Ատեն մը մեր հայերն կը կարծէին
թէ քրիստոնեայ և մազմետական կրօնից մէջ եղած
խտրութիւնը բաւական է հայ ազգութեան պահ-
պանութեանը. բայց այն երիտասարդութիւնը, որ ըստ
Օսմանլի՝ ցնորական դադափարներու տուած է
ինքնիշխան, բաւական տրոյեցաւ քաղաքական տնտե-
սագիտութիւնը և տեսաւ որ միայն կրօնը բաւական
չէ ազգի մը պահպանութեան, և թէ կառավա-
րութիւնը լաւ ըմբռնած ըլլալով այս ճշմար-
տութիւնը, հայ ազգի հարստութեան աղբիւրներն
ցանկանալու հետաւում էր, որով կանուխ կամ
ուշ հայ ժողովուրդը ինքնիշխան ողորմելի կամ
փճանալու մարձ վիճակի մէջ կը տեսնէր: Հոս տե-
ղը չէ այս նիւթին վրա երկարորեն խօսել, ա-
նոք որ կերթան Հայաստանը կը պտըտեն, դայս
իրենց աչքերով կը տեսնեն: Իսկ Կ. Պոլսի մէջ ալ

կառավարութեան երեք անգամ անանկութիւնը՝ որ
է ընդհանուր պարտուց, թղթագրամի և մէթափիկ
անանկութիւններն, խեղճ ժողովրդի դրամագէտը
վճացուցին և մեծ հարուած տուին Հայաստան
բնակող դրամատէրներու, որ մեծաքանակ ունէին
այս արժեքներէ, և հայ գիւղացուց, որը շատ թղ-
թագրամ և մէթափիկ ունէին: Հարկ է ըսել թէ ինչ-
պիսի օրէնքներով կը կաշխաղէ թերթը կառավա-
րութիւնը երկրին նիւթական բարգաւաճումը, զի
վաճառականութիւն և արհեստը քրիստոնէից ձեռ-
քն են. թերթերը չեն ուղեր որ մնան, և հայերն
որը իրենց աշխատասիրութեան և ընդունա-
կութեան դադափարը աշխարհի տուած են, այսօր
ամենաթշուառ վիճակի մէջ են գրիթէ: Արդ պարզ
է հարցնել. ժողովուրդ մը, որ բարեբար երկիրներ
ունի, վաճառականութեան յարմար տեղեր գտած
էր ինքն, աշխատատէր, բարոյականի տէր և կարող
է, բաւական դրամագէտ ունէր, և օրըստօրէ կը
աղքատանայ, ուրեմն հարստանալու համար ուրիշ
ինչ է պէտք է: Այս մտածութիւններն առաջնորդ
կըլլան նոցա, որը կը գործեն, և ոչ թէ բարձր
պաշտօններու հասնելու խանդը, ինչպէս կըսէ Օս-
մանլի: Պ. Չէրաղ Կոպուրն քրիստի մէջ լաւ հըր-
չակեց ի ներկայութեան աշխարհի մեծ տնտեսա-
գէտներու թէ «Ասիայի մէջ կը գտնուի ժողովուրդ
մը, որ տակաւին արտադրելու աղատութիւն չունի
և բնութեան մասնաւոր կերպիւ նպատաւորապէս
երկրի մը մէջ, որ խանձարուքն եղած է հանձա-
րեղ և գործունեայ ազգաց, հարստասարութիւնը կը
դատապարտեն արդարադոյն ի կործանումն և բա-
պառույն ի սով:

Հայաստանի այս տնտեսագիտական վիճակն լաւ
պարզուեցաւ պ. Պրայսի, որ ի հարկին պէտք
եղած բացարձակութիւններն կուտայ անշուշտ խոր-
հրդարանի մէջ: Հայ երիտասարդութեան մի քանի
պատգամաւորութիւններն ներկայացան պ. Պրայսի,
յայտնեցին շնորհակալութիւն այն համակրանաց
համար, զոր պարտն ցոյց տուաւ մեզ նկատմամբ
խորհրդարանի մէջ, և իրեն տեղեկացուցին ազգա-
յին մտաւոր դարգացման վիճակը: Պ. Պրայս ի
մէջ այլ յորդոյններու կարտասանէ նաև սա խոս-
քերն պատգամաւորութեան ամենէն նշանաւոր

Թերթի նպատակը, ինչ պիտի լինի նրա ուղղու-
թիւնը: Մեր քաղաքում կայ այժմ մի գաւառա-
կան թերթ հայոց լեզուով «Պատկ» վերնագրով, բայց
այդ լրագրի ուղղութիւնը, նրա ներկայիս բովանդա-
կութիւնը պարզ երևում է, որ խմբագիրը հիմնել է
իր լրագիրը, — եթէ միայն լրագիր անունը կարե-
ւի է նրան տալ: — միմիայն իր անձնական վրէժը
հանելու գիտամբ մի քանի իրան անհաճելի անձ-
նաւորութիւններին: Եւ ճշմարիտ այդպէս էլ վար-
չում է խմբագիրը. ասում են որ նա սորան նրան
դիմում է խնդրելով որ դրեն յօդուածներ իր այս
կամ այն անձնական թշնամու դէմ: Այսպիսով նա
դիմել է «Մշակ» թղթակցներին մինչև, խնդրե-
լով որ մի յօդուածով խայտառակէ պ. Բէդ-Նա-
զարեանցին, բայց որովհետև դա չէ կամեցել պ.
Բաբաջանեանի խնդրելը կատարել, իսկոյն «Պատ-
կ» ֆելիետոնի մէջ երևեցաւ նոյն թղթակցի նը-
կարագիրը իբր թէ նա հարբող է, գիշերներում
ընկած, արնոտը ամբողջ դիշերներ անցնող մարդ
է: Նի՞ք այս է մի գաւառական թերթի նպա-
տակը: — դա մեծ օգուտ չէ կարող տալ ժողովու-
րին:

Յաւայի չէ արդեօք, որ մեր լրագրութիւնը այդ
կորստաբեր շաւիղով է առաջ գնում, մին միւսին
օրինակ առնելով: Նորերում «Պատկ» մէջ կար
տպւած մի նամակ Աղաքաշարաւորի «Մշակ»
մէն առաջ ար ուղղութիւնն դէմ և տակը ստորա-
գրված «ստորագրութիւնը» բառը, կարծես թէ
հարկը մարդ են ստորագրել: Նրեի ստորագրու-
թիւնը բառը վերաբերում է Ղ. Տէր-Աղա-
բեանցին: Բայց ընդհանրապէս երևանցիները շա-
տերը և նոյն իսկ ես իմ սեփական աչքերով տե-
սած եմ փոստով վերադառնող համայնները, ու-
րոնց վրա հետեւեալ անկարգութիւն է լինում ուս-
մանը լեզուով «վերադարձնել իրան խմբագրին»:

Նի՞ք արդարեւ Բաբաջանեանը հիմնել է իր թեր-
թը սորան նորան հայտնելով, փոքրացի բառե-
րով — գոնէ չնչէր այդ թերթի վերնագրին ման-
կավար ժառանգ և գրական ան անսով բա-
ռերը: «Պատկ» նշանաբանն է՝ հայտնաբեր և
խայտառակութիւն:

Շատերը պատրաստեցին «Պատկ» հայտնաբե-
րին պատասխանելու, բայց իրենց պատիւը
լուրթեան մէջ որոնեցին, վասն զի այդ լրագրի
բռնած ընթացքը տեղիք է տուել երևանցիներին
շատերին կատակածելու խմբագրի ուղեղի առողջ
տրամադրութեան վրա:

Ա. Նր.

խումբին. «Գիտելով որ լուսաւորական հայրը կը
կարգէր ազգին սանտառաւոր մեծամասնութիւնը
բայց գիտեմք նաև որ դարձու ողիւն ներշնչեալ
անշուշտ ու է իստ ութիւն չէք դներ ձեր այն
եղբարց մէջ, որոց դասաւանդն ձեզմէ տարբեր
է:» Պ. Պրայս եթէ քաղաքավար կերպով փոքր
դաս մը կուտայ մեզ, դպցած է որ այս դասին
պէտք ունիւն: — Ներկայ պարագային մէջ մեզմ
տարբեր դասաւանդ ունեցող հայտնուն կարեորու-
թիւնը անորանալի է, և եթէ փիլիսոփայական
դպրաւորները մեզ առաջնորդ չեն, դէ՞ք մեր բա-
ղաբաղիտական շահերուն ունեցող լինիմք: Այսօր
հեռագիրն կը հաղորդէ մեզ թէ գեր. Հասուն մօտ
օրերս կընդունի կարգինաւորութիւն և պիտի բազմի
կարգինաւոր ժողովոյն մէջ: — Տեղւոյս ամենէն
կարևոր թերթիւն մին ֆրանսոս — անգղիական
«Սթամպուլ» քանի մը օր առաջ այս առթիւ
հաստատուած մէկ յօդուածովը ցուցաբեր թէ
Ներսիս ինչ մեծ կարեորութիւն կընծայէ չայ կա-
թօլիկութեան: — Մեզ համար վերջին աստիճան
անքաղաքադատական գործ մէկ ելլել կաթօլիկ և
բողոքական հայոց դէմ յարձակումներ ընել ճիշտ
այն պահուն, երբ կաթօլիկ և բողոքական կառա-
վարութեանց պաշտպանութիւնը կը խնդրեմք:
Տիկնիսին մէջ հրատարակուած մի քանի յօդուած-
ներ մեծ ցաւ կը պատճառեն մեզ. անգղիացի
ինչ աստիճան կրօնատէր լինենք գիտեմք, և եթէ
այս օրինակ յօդուածներ Անգղիոյ թերթերուն
մէջ թարգմանել տան մեր թշնամիք, բաւական
խելացիութիւն ըրած պիտի լինին: Անշուշտ գի-
տէք որ «Մշակ» և «Մեղու» չոս անգղիական
գետապանտներ կընդունի և կարևոր յօդուածներն
կը թարգմանուին, իբր կարծիք ուստական հայոց
և կը խրկուին ուր որ անկ է:

Հասուն գերապայծառ երբ կարգինաւորութիւն
ընդունի, պիտի մեկնի ի Հռոմ և չոս կարգինա-
ւոր ժողովոյն մէջն պիտի ուղղէ արեւելեան
գործերն. չոս իրեն յաջորդ մը պիտի ընտրուի, և
հասունօրէն կը դադրի հասունեանց և հակահա-
սունեանց վէճն: Պատկիւարեան, հակահասունեանց
ընտրած կաթօլիկոսը հնազանդութիւն ըրաւ Հա-
սուն:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 24

Ուղարկելով ընդամեն չորս բուրլը (4 բ.) որ տի-
կին Մաքսիմ և օր. Մարիամ Տէր-Ներսիսեանները
նուիրել են միանուագ յօդուած «Արարատեան»
այժմ «Միացեալ ընկերութեան հայոց» Դ. Պ.
Լիս, պարտք եմ համարում «Մշակ» 161 թիւա-
համարում գրած: քաղաքներու համար յայտնել, որ
ընկերութեան օգտին ժողովուած փողերը ես ըն-
դունել եմ անցեալ տարուայ սկզբունքն եկեղեցա-
կան գումարի մէջ մինչև ապտիկներին ժողովը
և խմբագրութեանը ուղարկելը, որպէս զի նոյա
շաւիղը օգտիւն ու ք. Յ. խանգաւ մայր եկեղեցին
և արդէն, ինչպէս յայտնի է, 1879 թուականի մը-
տից և եկից տունարէն՝ այդ տոկոսները մտած են
իշխալ եկեղեցու արկղը, որ իր լրուրեամբ պատ-
կանում է Գանձակի բազմակարգութեան երկուս
ղեկ-
րոնցներին և նշանակված է նրանց շնորհակա-
նագրով: Բայց մեզ վրա ոչինչ տոկոսիք չէ մնում,
ինչպէս կարծում է պ. Քոնստանտին:

Իսկ ինչ վերաբերում է տարեկան անդամակցու-
թեան յիշեալ ընկերութեան՝ իմ կողմից լաւ հա-
մարեցի փոխարինել տարեկան փողերի նուէրը
միանուագ 100 բուրլ տալով, որ արդէն հասած է
ըստ պատշաճին:

Երեցիտիւն Ն. Տէր-Ներսիսեանց

ՆԱՄԱԿ ՆԱՄԱԿԻՑ

Սեպտեմբերի 14

Վերջին օրերումս, սկսեալ յուլիսի 26-ից, այսինքն
այն օրից, երբ Շամախու հասարակութիւնը զին
երեցիտիւնային արձակել է և եկեղեցու շնորհակա-
նագրով պահանջում է նրանց, «Մշակ» լրագրի
միջոցաւ, (ինչպէս երևում է նրա 149, 160 և 163
համարներին), հրատարակված են մի քանի գրված-
ներ, որոնք իրանց անհիմն և ինքնաշար բովան-
դակութեամբ ընդունելով օտարութիւն իմն են մի
հասարակութեան համար: — Տեղեկութիւններ, ու-
րոնք զրկած են անանուն յօդուածագրի գրող
միայն արձանագրել են կրքի և ոչ այլ ինչ. առհաս-
տակ տեսնում է պ. յօդուածագիրը ամեն մի գոր-
ծի վերաբերութեամբ, որոնք հաստատվում են
հետեւեալ փաստերով: — Զորս տարի է, որ Շամա-
խու հասարակութիւնը իր սիրելի առաջնորդ Թա-

ղէոս եպիսկոպոսի ջանասիրութեամբ և նրա
վարդապետի աջակցութեամբ առաջ է խաղաց-
նում իր ազգային երեկի գործերը: — Դրանք են
տեղւոյս Մայր եկեղեցին, օրիորդաց ուսումնա-
րանի շինութիւնը և ս. Սեփանոսի վանքը
Սաղիսում, որոնք յաւիտեանական վկաներ են սրբա-
զանի աշխատասիրութեանը, դեռ մնան այլ բա-
րեգործութիւնները, որք կը յայտնվեն իրանց
ժամանակին: Բայց երկուս դպրոցների մասին, որ
յօդուածագիրը երազում է, ընդունվին անտիղի
են, որովհետև նրանց մէջ դասաւորութեանց շա-
րունակութիւնները կանգ առած չեն երբէք, ինչ-
պէս, շնորհիւ մեր սրբազանի, այժմ էլ շարունակ-
վում են: Եւ եթէ ներկայ սեպտեմբերի 1-րդ մա-
սուը դասաւորութիւնը փոքր ինչ յետաձգվե-
ցան, բայց դրա պատճառն էին մի երկու շահա-
սիր հեղափոխութիւն և ոչ սրբազան ինքը կամ
նրա վարդապետը: Իսկ ինչ կը վերաբերի կրօ-
նական արարողութեանց, կասեմք, որ յօդուածա-
գիրը միայն իր ցուրտ զգացմունքն ու սառնասր-
տութիւնն է դժգոյնը դէպի նա, և ոչ մեր մէջ
պատահած մի եղբարցի:

Այժմ դառնալով դէպի յարգոյ խմբագիրը «Մշ-
ակ» կը խնդրեմք, որ նա տեղիք չը տայ այսու-
հետեւ ցնեւու իր պատուական լրագրի էջերը մի
այս տեսակ խառնակչի ստալօղ դրուածներովը
ինչպէս վերոյիշեալ համարներում տպված են
Շամախու գրութեան վերաբերեալ սուտ և անտե-
ղի լուրերը: Մենք տարակուսութիւն չունենք կըր-
քոտ յօդուածագրի մասին, որովհետև այլ է մեր
ճշմարիտ զգացմունքը դէպի արդարութիւնը, այլ
է և նրա դրպարտութիւնը դէպի ուրիշ: Սա-
կայն խոսքովար կուտակցութիւն երբ, որ երեսակա-
յում է նա, միայն լրագրի մէջն ենք տեսնում,
իսկ մեր քաղաքի հասարակութիւնը խաղաղ և
անվրդով կեանք է անցկացնում, առանց ուղադու-
թիւն դարձնելու յօդուածագրի անձնատրութեան
վրա: Կը խնդրեմք յարգոյ խմբագրից, որ տեղ շնոր-
հէք մեր այս նամակին «Մշակ» մի անկիւնումը Դ
միամտութիւն յարգոյ ընթերցողներին:

Ա. Լալայեանց, Յակոբ Գեօղիայեան, Կողմէսիկ
աստէսօր Յակոբ Միկիտեանց, Գեղոր Տէր-Յովհաննէ-
սով, Միք. Աշարով, Գեղոր Կանկանեան, Ալեք-
սանդր Նաշարեանց:

պատրաստութիւններ կը տեսնեմ. կղզիներն, ներուց-
ներն կարգեցին, ամեն կողմ թորելներ կը
դեռնուին, ամեն կերպով Ներսիսի գիտելու կը
պատրաստուին: — Կարծեմք թէ չոս նեղ ժամեր
պիտի անցնեմք: — Վերջին ծանուցադրել կառավա-
րութիւնը շուտով հրատարակեց. այդ ծանուցա-
դրին հրատարակել տալով կառավարութիւնը տա-
նիկ հասարակութեան համակրութիւնը կուզէ բո-
ւորելով գրաւել. այսպիսի դժգոհութիւններ կընեն
պիտի ըսէ և դեռ. Ներսիս գոչ չէ, ուրեմն պատե-
րաւմբ: Թիւրք կառավարութիւնը կը կարծէ որ
իրեն անհնար պիտի լինի յաղթուել առաջ Ներ-
սիսի կամը կատարել: — Շանուգեղիքը հետեւեալ
դրուներ կը պարունակէ. 1. Զեքեգորայի երե-
ղի. 2. Յունական ներք. — 3. Բարեկրօնութիւնը
հայոց ընդ կողմ տեղերը. 4. Կանոնադրութիւն կայ-
ութեան երկուսական գաւառաց. 5. Բանկային
խնդիր: — Մենք մեզի պէտք եղած կէտը առ-
նենք:

Կառավարութիւնը նաև կը յայտարարէ որ ե-
թէ 61-րդ յօդուածի համաձայն տեղութեանց չէ
աղբորած ըրած բարեկարգութիւններն, պատճառն
այն է, որ բայց քանի մը քաղաքներու մէջ ոստի-
կանական բարեկարգութիւններ, կառավարու-
թիւնը չէ կրցած պէտք եղած բոլոր բարեկար-
գութիւններն ընել: Դէ յարգաբարձում չէ: —

Բայց այժմ Պէյքը բաշայի և ուրիշ պաշտօնէից
ըրած ընդութեանց շնորհիւ որոշած է ի գործ դնել
հետեւեալ միջոցներն:

1. Եղբուրմի, Վանայ, Բաղէի և Տիգրանակերտի
դատարաններն աւելի լաւ կերպով կազմակերպել
և բարեկարգել: — Կայսրութեան բարձրաստիճան
բաշայ մը յատուկ պաշտօն պիտի ունենայ հսկել
այդ բարեկարգութեան: —
2. Դուռը Ներսիսի կառավարութիւններն պա-
հանջած երաշխաւորութիւններն ընդունելն մին-
չե երեք ամիս վերոյիշեալ գաւառներու ոստի-
կանութիւնը և ժամկարծան պիտի վերանորոգէ:
3. Ժանդարմայի գնդապետներն պատերազմի
պաշտօնեայն պիտի ընտրէ: Միւս պաշտօնեա-
նեկն դանազան եղանակու պիտի ընտրուին և վա-
ւերացումը պատերազմի պաշտօնեայն պիտի ընէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» № 176 մէջ տղաների մի ցուցակի
մէջ մի սխալ մտաւ: Կոնստանդին Շահադարեան
որ նուիրեց 5 բուրլ բոլորովին յիշված չէ եղել:
Բացի սորանից փոխանակ օրիորդ Սօֆիա Շահա-
դարեան, պէտք է լինի տիկին Սօֆիա Շահադա-
րեան:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ա. Բայան-
թարեանցի հեղինակութիւնը ուսուրէն լեզուով
«Ռուսաստանի անասունների արդիւնաշատական
խնդիրը» (Къ вопросу о пр. изводности
Русскаго скота): Դրոյից տպված է Մոսկու-
յում, Ներկայ 1880 թվին, Մարտի: Եւ պարա-
նուն: Այդ աշխատութիւնը կազմում է մի բաւա-
կան մշակված, Ռուսաստանում եղած անասնա-
պահութեան այլ և այլ ձևերի անտեսական ըննու-
թիւնը:

Մեզ խնդրում են յայտնել որ Ներսիսեան աղ-
բային-հոգեւոր դպրոցի նոր հոգաբարձուների ընտ-
րութիւնը կը լինի Ներկայ հոկտեմբեր ամսի 19-ին,
կերակի օր, առաւօտեան 11 ժամին, նոյն դպրոցի
մէջ, որի մասին արդէն քաղաքին բոլոր եկեղեցի-
ների մէջ եղած է ծանուցումն:

ԱՍՈՒՅԻՍՈՒՑԻՑ մեզ գրում են. սեպտեմբերի
21-ին, տեղային երիտասարդութեան խնդրանաց
համաձայն, Խորեն աւագ քահանայ Բարսեղեանցը
հրապարակ քաղաքի դանազան դասակարգին պա-
տկանող անձանց, և առաջարկեց նուէրներ հաւա-
քել յօդուած թիւղքաց Հայաստանի սովորաւորներին:
Նոյն ժողովում ստորագրեցին մինչև 404 բուրլ:
Ստորագրութիւնները դեռ շարունակվում են: Մի
և նոյն նպատակով դիտարկութիւն ունեն ստո-
րագրութիւն քաղաքի կանանց սեռի մէջ: Այդ
աշխատութիւնը յանձն են առել տիկին Աշխէն
Բաղդասար և օրիորդ Ս. Յովհաննէսեանց:

Օրերումս մի աղաչիւրդոցի 15 տարեկան աղջիկ
մտնում է ՔԱՄՍՈՒՅՑ եկեղեցու բալը մուրացկա-
նութեան համար: Նոյն բալում ընտելով մի հրէյ
ընտանիքի որդին մօտենում է աղքատ աղջկան և
անհամեստ առաջարկութիւն է անում: Վերադո-
ված աղջիկը բռնում է նրա կողքից և կա-
մենում է լսելու: Եկեղեցու ժամուրը և ուրիշները
վրա են հասնում և աղաւաղում են հրէյին: Նամա-

4. Գաւառական նա հիւրն ու բաժանումը
4 ամիսներու մէջ պիտի ըմբնայ, յուլիս 5-ին Բ.
Դրան առ տեղութիւնում տուած ծանուցադրին մէջ
ցոյց տուած կազմակերպութեան եղանակին հա-
մաձայն:

5. Բացի մաքսատան, անուղղակի տուրքներն
հետագրի և թղթատարութեան հասոյթներն, միւս
բոլոր տուրքներին պիտի վճարուին գաւառին պաշ-
տօնակալաց ծախքերն, մնացածն է 10% պիտի
յատկացուի տեղական պիտոյից, այսինքն շնոր-
հեանց, կրթութեան, և այլն, մնացած 90% ինչպէս
նաև 10% է աւելցածը կենդոնական դանձուն
պիտի խրկուին:

6. Այդ գաւառաց պաշտօնէից ընտրութիւնը
հաստատուած օրինաց համաձայն պիտի լինի: Բա-
ցի կարևոր պաշտօնեայնեկէ, երկրորդական պաշ-
տօնէից ընտրութիւնը և հրաժարումը ընդէ, կու-
սակար պիտի կրնայ ընել: — Ամեն օսմանցի հա-
սար: Կաց պաշտօնեանք մէջ մտնելու իրաւունք պի-
տի ունենայ ըստ 2-ն յօդուած Պերլին դաշնա-
դրի և կայսրութեան օրինաց:

Նի դա մի է դատարաններն ի գործ պիտի
դնեն օսմանեան օրինադրքը և կայսրութեան մէջ
զօրութիւն ունեցող բոլոր միւս օրէնքներն:

Այս ասոնք են համառօտաբար մեր խնդրոյն վե-
ր սրբեալ կէտերն: Խորհրդածութեանց պէտք չը կայ
հարձեալ խախել: Նի՞ք ամեն մէկ յօդուածին քիչ մը
ուղադրութիւն ընենք, կը տեսնենք որ ամենքն ըստ
երեւոյթին, ամեն բարեկարգութիւն ըստածն ուրիշ
բան չէ, բայց եթէ առջի վիճակն անխախտ պահել: —
Ինչ որ աւելի դարմանալի է, այն է որ Դուռը ա-
ռաջ կը ընէ յուլիս 5-ի ծանուցադրելը, որոյ հա-
մար այնքան կծու պատասխան ընդունեց, որով
թիւններն: Արդեօք դիտարկութիւն տեղութեանց
վա խնդրէ: Բարեկարգաբար թրքաց կամացն
ու հանդիպն հնազանդ Ներսիս մը չը կայ, և յու-
սակը թէ պէտք եղած դասն շուտով տան Սաղե-
ներու նման աւամօթ յանդուգներուն:

Հայկոյ

